Հաստատված է
«Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2021թ. 21 օգոստոս N 69-1/21 Լ հրամանով

ՏՆՕՐԵՆ՝ _____ Վ. Կիրակոսյան

Համաձայնեցված է՝
ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Խորհրդի 2021թ. Օգոստոսի 30-ի N 8 նիստի որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
« ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»

ԵՐԵՎԱՆ 2021

1. Ընդհանուր դրույթներ

1.2. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ «ԵՄԱՊՔ ուսանողական իրական թատրոն»-ը (այսուհետ՝ Թատրոն) մարդկանց կամավոր միություն է՝ հիմնված ընդհանուր շահերի և համատեղ ստեղծագործական գործունեության վրա:

Կրճատ՝ ԵՄԱՊՔՈՒԹ:

1.2.Թատրոնն իր գործունեության մեջ ղեկավարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, ԵՄԱՊՔ կանոնադրությամբ, սույն դրույթներով:

1.3. Թատրոնին կարող են անդամակցել քոլեջի ուսանողները, ինչպես նաև այլ քոլեջների , բուհերի ուսանողներ և այլ անձինք:

2. Թատրոնի նպատակներն ու խնդիրները

2.1. Ուսանող երիտասարդության գեղագիտական դաստիարակության համակարգի կատարելագործում և ստեղծագործական պոտենցիալի իրացման, ինչպես նաև բարոյական, մշակութային, պատմական, ավանդույթների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

2.2. Ուսանող երիտասարդության ներառում գեղարվեստական-լուսավորչական սոցիալապես նշանակալի գործունեության մեջ:

2.3. Ոսանողների ազատ ժամանակի բովանդակալից, հագեցված անցկացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

2.4. Ուսանողների մասնագիտական կողմնորոշման կատարելագործման նպատակով մասնակցության թվաքանակի մեծացում՝ համաձայն թատրոնի տարեկան աշխատանքային ծրագրի:

3.Թատրոնի կառուցվածքը

3.1. Թատրոնի ընդհանուր կառավարումը և դրա գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԵՄԱՊՔ տնօրենը:

3.2. Թատրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է թատրոնի տնօրենը ով նշանակավում է քոլեջի տնօրենի կողմից:

3.3. Թատրոնի տնօրենի գործառութային պարտականությունները.

- մշակում է թատրոնի մասնակիցների պատրաստման և վարպետության բարձրացման ընթացիկ և հեռանկարային նախագծերը,
- քոլեջում կազմակերպում է ներկայացումների բեմադրությունը,
- կապեր է հաստատում այլ ուսումնական հաստատությունների հետ, կազմակերպում է արտագնա ներկայացումների աշխատանքները,

-կազմում է քոլեջում և այլ ուսումնական հաստատություններում թատրոնի ելույթների ժամանակացույցը,

-մասնակցում է երիտասարդության դաստիարակչական աշխատանքներին, և ուսումնա-մեթոդական փաստաթղթերի մշակմանը,
-
վերահսկում է անցկացվող պարապմունքների և փորձերի որակն ու պարբերականությունը, ներկայացման պատրաստման ժամկետների պահպանումը, պլանների և ծրագրերի կատարումը, ուսումնական աշխատանքների և թատերական գործունեության ռացիոնալ համադրումը, անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության վարման կարգը,
-իրականացնում է աշխատանքներ ստեղծագործական գործընթացը մեթոդական գրականությամբ, ինչպես նաև բեմահարթակը սարքավորումներով, անհրաժեշտ պարագաներով և դիտողական պիտույքներով ապահովելու համար,
-պատրաստում է քաղաքացիա-իրավական պայմանագրեր, կազմում է մրցույթ-փառատոններում թատրոնի գործունեության ծախսերի նախահաշիվները, վերահսկում է այդ նպատակների համար միջոցների նպատակային օգտագործումը,
-վերլուծում է բեմական գործի ուսուցման որակական ցուցանիշների արդյունքները և դրանց արդյունավետությունը (թատերախմբերի կազմի փոփոխություն, դերասանական վարպետության աճ, ներկայացումների քանակը), ապահովում է հաշվետվողականության սահմանված կարգը,
-իրականացնում է հանդիսատեսի հետ աշխատանքների նոր միջոցների որոնում, ինչպես նաև ավանդական ձևերի հարստացում, որոնց նպատակը թատերական արվեստի և ուսանողական թատրոնի նկատմամբ հանդիսատեսի հետաքրքրության շարունակական աճն է, հոգևոր պահանջմունքների առավելագույն բավարարումը:
3.4. Թատրոնի սահմանված գործառության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Թատրոնի գեղարվեստական խորհուրդը:
3.5. Թատրոնի գեղարվեստական խորհրդի գործառութային պարտականությունները.

- թատրոնի աշխատանքային ծրագրի հաստատում,
- թատրոնի խաղացանկային քաղաքականության հաստատում,
- թատրոնի ծախսերի նախահաշվի հաստատում:

3.7.Թատրոնի գեղարվեստական ղեկավարի գործառութային պարտականությունները.

- պատասխանատու է փորձերի պարբերական անցկացման համար,
- պատրաստում է թատրոնի տարեկան խաղացանկը:

3.8. Նախապատրաստական փորձերի և բեմադրության իրականացման ընթացքին հետևում է ռեժիսորը:

3.9. Ռեժիսորի գործառութային պարտականությունները.
- մշակում է ընթացիկ և հեռանկարային խաղացանկը,
-իրականացնում է ներկայացումների բեմադրությունը, համերգային ծրագրերը,
-մշտապես հետևում է թատերախմբի անդամների կատարողական վարպետության բարձրացմանը, կազմակերպում է ուսումնա-մեթոդական աշխատանքները:

4.Թատրոնի գործառույթները

4.1. Թատրոնի գործունեության և զարգացման հեռանկարների սահմանում:
4.2.Փորձերի, փառատոների, ստեղծագործական երեկոների, ներկայացումների անցկացում:
4.3. Թատրոնի աշխատանքներն արտացոլող նյութերի հավաքագրում:
4.4. Ուսանողական այլ ստուդիաների հետ փորձի փոխանակում:
4.5.Դերասանական վարպետության և հմտությունների ձեռքբերման նպատակով այցելություններ պրոֆեսիոնալ թատրոններ:
4.6.Փոխգործակցություն տարբեր երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական խմբերի, գովազդային գործակալությունների, թատրոնների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

5. Թատրոնի ֆինանսավորման աղբյուրները

5.1. Թատրոնի ֆինանսավորման աղբյուրները քոլեջի բյուջետային և արտաբյուջետային միջոցներն են:
5.2. Կամավոր նվիրատվություններ, հովանավորների ներդրումներ, իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվություններ:

6. Թատրոնի անդամների իրավունքներն ու պարտականությունները

6.1. Թատրոնի գործունեության կազմակերպման նպատակով ղեկավարությանը նոր առաջարկությունների ներկայացում և մասնակցություն դրանց իրականացմանը:
6.2. Ստեղծագործական վերելքի ձգտում:
6.3. Մասնակցություն քոլեջի միջոցառումներին և ստեղծագործական այլ ծրագրերին:
6.4. Սահմանված կարգին համապատասխան թատրոնի նյութական արժեքների պահպանում և բազմացում:
6.5. Թատրոնի հեղինակության պահպանում և բարձրացում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում ԵՄԱՊՔ տնօրենի կողմից հաստատվելուց հետո:
7.2. Կանոնակարգում փոփոխությունների և լրացումների դեպքում դրանք ուժի մեջ են մտնում տնօրենի կողմից հաստատվելուց անմիջապես հետո: